

## ՄԱՐԴԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

*Իրականացվում է փիլիսոփայական վերլուծությունն հետևյալ տեսանկյունով. «մարդ-տեխնիկա» հարաբերությունները պետք է համապատասխանեն արտադրության տեխնիկական հիմունքներին և, որ արտադրության սուբյեկտի (մարդու) և արտադրամիջոցների փոխհարաբերությունը պայմանավորված է աշխատանքի բնույթից, այսինքն՝ այն բանից, թե աշխատողն ու աշխատամիջոցներն ինչ գործառույթ են կատարում:*

*Հատուկ անդրադարձ է եղել արտադրության տեխնոլոգիական եղանակին, պատմական զարգացման արդյունքում ձևավորված չորս փուլերին՝ յուրացման, ագրարային, ինդուստրիալ և տեղեկատվական: Պարզաբանվում է, որ միայն մարդու նպատակադիր ու կարգավորիչ գործունեության շնորհիվ է, որ տեխնիկական վերաճում է զարգացող համակարգի:*

**Առանցքային բառեր.** *մարդ-տեխնիկա հարաբերություն, համակարգ, սոցիալական բնավորություն, սոցիալական բարեկեցություն*

Իրենց կյանքի որոշակի փուլում, մտնելով գործնական փոխհարաբերությունների ու գործունեության մեջ, մարդիկ ոչ միայն առնչվում են նախորդ սերունդների կողմից ստեղծված տեխնոլոգիական համակարգերի հետ, այլև համապատասխան հարաբերությունների: Ընդ որում, Տմարդ-տեխնիկա՝ հարաբերությունները պետք է համապատասխանեն արտադրության տեխնիկական հիմունքներին: Բանն այն է, որ ձեռքի աշխատանքի կամ մեքենայական արտադրության դեպքում սկզբունքորեն փոխվում են մարդ-տեխնիկա փոխհարաբերությունների և հասարակության տեխնոսոցիալական բանաձևի բնույթն ու բովանդակությունը: Արտադրության սուբյեկտի և արտադրության միջոցների (տեխնիկայի) փոխհարաբերությունը պայմանավորված է աշխատանքի բնույթից, այսինքն՝ այն բանից, թե աշխատողն ու աշխատանքի միջոցներն ինչ գործառույթ են կատարում: Նրանց գործառույթների բաժանումը պայմանականորեն անցել է չորս հիմնական փուլ:


*Առաջին փուլում* արտադրական գործընթացի հիմնական շարժիչ ուժը համարվել է մարդու մկանային ուժը:

*Երկրորդ փուլում* մարդը մնում է արտադրության գլխավոր շարժիչ ուժը՝ օգտագործելով նաև քաշող ուժի, քամու և ջրի էներգիայի հնարավորությունները:

*Երրորդ փուլում* (ինդուստրիալ հասարակություն) մարդը մնում է արտադրության գլխավոր գործոնը, բայց հանդես է գալիս որպես կառավարող գործոն:

*Չորրորդ փուլում* (տեղեկատվական-տեխնոլոգիական հասարակություն) մարդը լիովին դուրս է մնում անմիջական արտադրական գործընթացներից և դառնում արտադրությունը վերահսկող գործոն:

Ասվածից հետևում է, որ պատմության մեջ կարելի է առանձնացնել արտադրության տեխնոլոգիական եղանակի չորս փուլ՝ յուրացման, ագրարային, ինդուստրիալ և տեղեկատվական (նկ.): Ընդ որում, արտադրության ամեն մի տեխնոլոգիական եղանակ բնութագրվում է միայն իրեն բնորոշ աշխատանքային գործիքներով: Այդ իմաստով արտադրության տեխնոլոգիական եղանակներն իրարից տարբերվում են մի շարք հատկանիշներով՝ աշխատանքային գործիքներով, աշխատանքի բնույթով, աշխատանքի կազմակերպման եղանակով և այլն:



**Նկ. Արտադրության տեխնոլոգիական եղանակի փուլերը**

Արդի համաշխարհային քաղաքակրթությունը կարելի է բնութագրել որպես ինդուստրիալ քաղաքակրթության տեխնածին տարատեսակ: Ի տարբերություն պատմության աստվածաբանական, ֆորմալիզմի և զանազան այլ մեկնաբանությունների, քաղաքակրթության տեղեկատվական տեխնոլոգիական մեկնաբանության հիմքում ընկած է պատմության ռացիոնալիստական սկզբունքը: Անշուշտ այս սկզբունքը ևս լիովին չի բացահայտում պատմական գործընթացների բազմազանությունն ու զարգացման առանձնահատկությունները, բայց հնարավորություն է ընձեռում գիտությունն ու տեխնիկան դիտարկել որպես սոցիալական կյանքի զարգացման ու առաջընթացի կարևորագույն դետերմինանտներ: Եթե նախորդ հարյուրամյակներում գիտության պրոբլեմներով զբաղվում էին քիչ թվով ընտրյալներ, իսկ տեխնիկայի նկատմամբ վերաբերմունքը խիստ կիրառական էր, ապա մեր օրերում գիտությունն ու տեխնիկան դարձել են հասարակական կյանքը բնութագրող զանգվածային երևույթներ, որոնք նաև փիլիսոփայական լուրջ իմաստավորման կարիք ունեն: Այս առնչությամբ հարկ է նկատել, որ եթե գիտությունը փիլիսոփայական անդրադարձի հնագույն օբյեկտներից մեկն է, ապա տեխնիկական փիլիսոփայական հետազոտման օբյեկտ է դարձել միայն 19-րդ դարում: Արդեն

20-րդ դարի կեսերին տեխնիկայի փիլիսոփայական պրոբլեմների շարքում տեսական ու գործնական մեծ հնչեղություն ձեռք բերեցին Տմարդ-տեխնիկա՝ փոխհարաբերության հիմնահարցերը (Հայդեգեր, Յասպերս, Վեբլեն, Թոֆֆլեր և այլք): Եվ դա պատահական չէ:

Տեխնիկական-տեխնոլոգիական առաջընթացի էությունը հնարավոր չէ հասկանալ առանց տեխնիկայի համակարգում մարդու, որպես տեխնիկական շարժման մեջ դնող գլխավոր տարրի, տեղի ու դերի ըմբռնման: Տեխնիկան ինքնին չունի զարգացման, վերարտադրման ու գործառնության հատկություն: *Նյութական-տեխնոլոգիական ամբողջականության և համակարգայնության կրողը և ապահովողը մարդու աշխատանքն է:* Տեխնիկան ինքնին չի կարող վերածվել ինքնազարգացող համակարգի: Միայն մարդու նպատակադիր ու կարգավորիչ գործունեության շնորհիվ է, որ տեխնիկական վերաճում է զարգացող համակարգի: Պատահական չէ, որ Տեխնիկա՝ հասկացությունը հունական մշակույթի համատեքստում ընկալվում էր որպես արվեստ, վարպետություն, ունակություն և այլն: Ավելին, հին աշխարհում տեխնիկական սահմանվում էր որպես մարդու ստեղծագործական գործունեության ներքին կարողություն:

Տեխնիկայի մյուս կարևոր բնութագիրն առնչվում է նրա սոցիալական էությանը: Բանն այն է, որ աշխատանքային գործիքները պարզապես տեխնիկայի դրսևորումներ չեն: Այդ գործիքները մարմնավորում են իրենց պատրաստողների սոցիալական տրամաբանությունը, աշխատելու և գործիքներից օգտվելու նրանց անհատական կարողությունները և այլն: Այլ կերպ ասած՝ *տեխնիկական ունի որոշակի սոցիալական «բնավորություն» և արտացոլում է մարդկության կողմից ստեղծված գիտելիքների, հմտությունների, դրանց գործադրման մեխանիզմների մասին մշակույթի բովանդակությունը:* Տեխնիկան, որպես «քաղաքակրթված» առարկա, բացի իր բնական կազմավորման տրամաբանությունից, ունի «սոցիալական բարեկեցություն» ապահովելու որոշակի հատկանիշներ և այդքանով էլ իշխում է հասարակության վրա: Օրտեգա-Ի-Գասսետը գտնում է, որ տեխնածին քաղաքակրթությունը ստեղծեց կրթական նոր համակարգ, որը թեև զանգվածներին սովորեցնում է նոր տեխնիկայից օգտվելու հիմունքները, բայց լինելով մատչելի ու մասսայական, չի կարողանում մարդկանց փոխանցել պատմական մեծ խնդիրների, մշակույթի ու բարոյականության փիլիսոփայական իմաստն ու բովանդակությունը [1]: Այս առնչությամբ Կ. Յասպերսը նկատում է, որ տեխնիկական պահանջում է ստեղծել, օրինակ, արտադրական խոշոր միավորումներ, քանի որ միայն նման միավորումներում է հնարավոր նորագույն տեխնիկայի արդյունավետ ու մասսայական օգտագործումը [2]: Այդ պատճառով էլ տեխնիկայից մարդկանց կախվածությունն ի վերջո վերաճում է աշխատանքի կազմակերպման մենաշնորհ ձևերի և դրանցում գործող անդամ հարաբերություններից մարդկանց կախվածության: Ձևավորելով որպես որոշակի սոցիալական գործառույթներ կատարող համակարգ՝ տեխնիկական ձեռք է բերում սոցիալական համակարգի վերարտադրման գործառույթներ:

Բանն այն է, գրում է Ա. Շվեյցերը, մանրամասն չանդրադառնալով անձի սոցիալ-փիլիսոփայական հայեցակարգերին, պետք է նկատել, որ արդի տեխնածին

քաղաքակրթությունն անձի հիմնախնդրին հաղորդեց նոր բնույթ և բովանդակություն: Այդ քաղաքակրթությունը, մասնավորապես անձի առջև դրեց առաջին հայացքից իրարամեջ պահանջներ: Տեխնիկայի ու տեխնոլոգիայի զարգացումը մի կողմից պահանջում է, որ ժամանակակից մարդը դրսևորի ստեղծագործական ակտիվություն և ինքնուրույն որոշումներ կայացնելու ընդունակություն, իսկ մյուս կողմից՝ որ մարդը դառնա մեքենայական արտադրության կցորդ, այսինքն՝ չգործի որպես անձ [3]: Տեխնիկան, որի օգնությամբ մարդը ներգործում ու փոխում է իրերի բնական վիճակը, տեղեկատվական կող է: Ստեղծելով որոշակի գործառույթներ կատարող տեխնիկա՝ մարդը դրանով իսկ ստեղծում է դրանց գործելու եղանակը: Ստեղծվում է այնպիսի տպավորություն, ասես ոչ թե մարդն է տեխնիկային «սովորեցնում» աշխատել մարդուն բնորոշ եղանակով, այլ տեխնիկան է «հարկադրում» մարդուն գործել իր եղանակով: Այս «հարկադրանքի» մեջ գերբնական ոչինչ չկա, քանի որ տեխնիկայի այդ հատկությունը նրանում առարկայացված սոցիալական տեղեկատվության տրամաբանությունն է: Տեխնիկան, այդ իմաստով, արդեն իսկ պարունակում է իրենից օգտվելու եղանակը: Տեխնոսֆերա դառնալով՝ մարդկային տրամաբանության կրողն ակտիվորեն մասնակցում ու միջամտում է հասարակության նաև սոցիոսֆերայի ու ինֆոսֆերայի կազմակերպման ու գործառնման աշխատանքներին: Ամերիկյան հայտնի տեսաբան Է. Թոֆֆլերի խոսքերով ասած, *տեխնիկան ինդուստրիալ քաղաքակրթության «թաքնված կողմն» է [4]:*

Ինչպես արդեն նշվեց, որպես սոցիալականացված առարկա, տեխնիկան մշակույթի առարկայացված դրսևորման ձև է: Այդ ձևը տվյալ տեխնիկայի օգտագործման եղանակն է, նրա տարրերի կազմավորման այն հիմունքը, ինչը նրան դարձնում է սոցիալապես օգտակար առարկա: Բանն այն է, որ տեխնիկային հաղորդելով որոշակի գործառույթներ, դրանով իսկ մարդը նրան հաղորդում է գործողությունների որոշակի կարգ ու եղանակ: Իսկ դա նշանակում է, որ հարաբերականորեն կայուն վիճակ ունեցող և գործառույթներով օժտված տեխնիկան իր մեջ մարմնավորում է մարդկանց պահանջումների բնույթն ու բավարարման եղանակը: Բացի այդ, տեխնիկան արտացոլում է նաև մարդկանց ընդունակությունների զարգացվածության աստիճանը, իրականության ոչ միայն սոցիալական, այլև գեղագիտական յուրացման եղանակը և այլն: Այդ իմաստով *տեխնիկան մարդուն «ծառայող» առարկա է և որպես այդպիսին այն ունի սոցիալական խնամքի կարիք:*

Այն պահից ի վեր, ինչ գիտությունը վերաճեց անմիջական արտադրողական ուժի, ստեղծվեց մարդկային գործունեության միջոցների և մեխանիզմների արհեստական համակարգ: Աշխատանքային գործիքների մեքենայական արտադրության կազմակերպումը նպաստեց նաև տեխնիկական-տեխնոլոգիական համակարգի ձևավորմանը: Այդ համակարգի կարևորագույն տարրերից մեկը մարդն է, որի պահանջումները և սոցիալական տրամաբանությունը դառնում են այդ տեխնիկայի գործունեության շարժիչ ուժերը: *Տեխնիկական առաջընթացի գլխավոր օրինաչափությունն այն է, որ մարդու անմիջական տեխնոլոգիական գործառույթներից շատերը*

*փոխանցվում են տեխնիկային:* Բայց գործունեության գործընթացից մարդկային որոշ գործառույթների դուրս մղումն ունի հարաբերական բնույթ, քանի որ տեխնիկայի զարգացումը ոչ միայն սահմանափակում է մարդկային գործառույթների շրջանակները, այլև ընդլայնում է տեխնիկական միջոցների հետ մարդու փոխներգործության ոլորտը: Տեխնիկական միջոցների համակարգում մարդու դերի փոփոխությունները հակասական են, քանի որ դրանք իրականանում են նշված հակադիր միտումների համատեքստում: Տեխնիկական-տեխնոլոգիական առաջընթացը երբեք չի կարող դառնալ մարդուն արտադրական գործունեությունից դուրս մղելու գործընթաց, քանի որ տեխնիկայի զարգացմանը զուգընթաց ծագում են տեխնոլոգիական նոր գործառույթներ, որոնք չեն կարող իրագործվել առանց մարդկային գործուհի: Այլ կերպ ասած՝ *տեխնիկայի համակարգում մարդու տեղն ու դերը սկզբունքորեն չի փոխվում, փոխվում են միայն նրա համակարգաստեղծ գործառույթները:*

Տեխնիկական առաջընթացը փոխում է աշխատանքի բովանդակությունը, բայց չի կարող վերացնել աշխատանքը՝ որպես այդպիսին: Տեխնիկան, օրինակ, կարող է արտադրության այս կամ այն ճյուղում կրճատել կենդանի աշխատանքի քանակը, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, բայց չի կարող արտադրության գործընթացից լիովին դուրս մղել կենդանի աշխատանքը: Այդ տեսակետից անհերքելի իրողություն է, որ տեխնիկա-տեխնոլոգիական գործընթացներից մարդու դուրս մղումը հարաբերական է: Տեխնիկան, ի վերջո, չի կարող դառնալ ինքնաբավ ու ինքնազարգացող համակարգ: Ավելին, տեխնիկայի համակարգում մարդու ֆունկցիաների պահպանումից հետևում է, որ աշխատանքային գործունեության մեջ միշտ էլ կպահպանվի ֆիզիկական աշխատանքի անհրաժեշտությունը: Ասվածից ետևում է, *որ մարդը և տեխնիկան գտնվում են միասնության մեջ և ամեն մի կոնկրետ դարաշրջան ձևավորում է նրանց փոխադարձ համապատասխանության նախադրյալներ:* Ինչպիսին մարդն է, այնպիսին էլ տեխնիկան է և հակառակը՝ տեխնիկայի զարգացվածության աստիճանից կարելի է մոտավոր ճշտությամբ գաղափար կազմել մարդու զարգացվածության, նրա որակների և հմտությունների մասին: Մարդու և տեխնիկայի փոխհարաբերության ամեն մի կոնկրետ դեպքում մարդն օժտված է ֆիզիկական, հոգեբանական և ինտելեկտուալ այնպիսի ամբողջական հատկանիշներով, որոնք անհրաժեշտ են տեխնոկրատական միջավայրի արդյունավետ գործառնության համար: Մարդու այդ հատկանիշները գտնվում են մշտական զարգացման ու կատարելագործման մեջ: Տեխնիկայից օգտվելու մարդկային հատկանիշներն անվերջ կատարելագործվող մեծություններ են, քանի որ գործիքներից օգտվելու ձևերը մշտապես կատարելագործվում են և ձևավորում են նաև նոր հմտություն և որակ:

Ստեղծելով նոր տեխնիկական-տեխնոլոգիական միջավայր, մարդը դրանով իսկ ձեռք է բերում նոր գործառույթներ և համապատասխան հմտություններ: Դրանք, իրենց հերթին ծնում են տեխնիկական միջավայրը կատարելագործելու նոր պահանջմունքներ:

Մարդկային գործունեության բարդացմանը զուգահեռ մարդու առողջության ու կյանքի համար ծագում են նոր սպառնալիքներ ու վտանգներ: Այդ պատճառով էլ ծագում են այնպիսի

տեխնիկական միջոցներ, որոնց գլխավոր ֆունկցիան ոչ թե առարկաների վերափոխումն է (ինչպես նախկինում), այլ մարդու և առարկայի միջև կապերի ապահովումը: Այս հիմքի վրա ձևավորվում են արտադրող տեխնիկայից որոշակիորեն տարբերվող տեխնիկական միջոցներ (հսկող-չափող գործիքներ, անվտանգության միջոցներ, բնապահպանման միջոցներ և այլն):

**Т. А. Оганнесян**

## **ЧЕЛОВЕК В ИНФОРМАЦИОННО-ТЕХНОЛОГИЧЕСКОЙ СИСТЕМЕ**

*Производится философский анализ со следующей точки зрения: отношения “человек-техника” должны соответствовать техническим основам производства и, что отношение субъекта и средств производства обусловлено сущностью работы, то есть тем, какие функции выполняют сотрудник и средства труда.*

*Особенно упомянут технологический способ производства, четыре фазы, сформированные в результате исторического развития: освоения, аграрная, индустриальная и информационная. Разъясняется, что только благодаря целеустремленной и контролирующей деятельности человека техника превращается в развивающуюся систему.*

**Ключевые слова:** *отношения “человек-техника”, система, социальный характер, социальное процветание*

**T. A. Hovhannesyan**

## **HUMAN IN INFORMATIONAL-TECHNOLOGICAL SYSTEM**

*In the studied material the philosophical analysis of theme is conducted by the following point of view: “Man-technique” relations has to be relevant to the technical foundations of manufacturing and that relation of manufacturing subject (man) and producing means (technique) is arranged with nature of job, namely from that of what function are doing worker and means of job.*

*Special reflect was done to the technological form of manufacture, four phases formed in result of historical development: salvage, agrarian, industrial and informational. Moreover each technological form of manufacturing is characterized by its typical work tools, job characteristics, organizational type of work, organizational way of job.*

*In the studied material is explained, that without man it is not possible to reveal the essence of technical-technological progress. Only due to man’s aimed and controlling activity the technique outgrows into developing system.*

**Keywords:** *“Man-technique” relation, system, social “Character”, “Social prosperity”*

### **Գրականություն**

1. **Ортега-и-Гассет Х.** Восстание масс. - М., 1997. - С. 220-221.
2. **Ясперс К.** Смысл и назначение истории. - М., 1991. - С. 127.
3. **Швейцер А.,** Культура и этика. – М., 1988. - С. 103.
4. **Тоффлер Э.** Третья волна. - М., 1999. - С. 92.

**Հովհաննեսյան Թադուհի Արտաշեսի** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման ամբիոն, ասիստենտ, (+374) 93351746:

**Оганнесян Тагуи Арташесовна** (РА, Ереван) - НУАСА, кафедра Экономики, права и управления, ассистент, (+374) 93351746.

**Hovhannesyan Taguhi Artashes** (RA, Yerevan)- NUACA, chair of Economy, law and management, assistant, (+374) 93351746.

Ներկայացվել է՝ 26.12.014թ.

Ընդունվել է տպագրության՝ 15.01.2015թ.